Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ ● Անվանում, հասցե ● Տնօրեն ● Էլ. հասցե ● Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր ● Հետազոտության թեմա	Ուսուցչի հմտությունների կարևորությունը տարբեր ունակություններ ունեցող աշակերտների հետ աշխատանքում միջին դպրոցում
Ուսուցչի տվյալներ ● Անուն, ազգանուն, հայրանուն ● Մասնագիտություն ● Հեռախոս ● Էլ. հասցե ● Դասավանդվող առարկաներ ● Դասարաններ	Էդիտա Բադալյան Էդուարդի Ռուսաց լեզվի ուսուցչուհի (093)61-21-60 1edita.badalyan.86@mail.ru Ռուսաց լեզու և գրականություն IV,VII,VIII,IX

Ուսումնական հաստատության տվյալներ ● Անվանումը, հասցե ● Հեռախոս ● Էլ. հասցե (տնօրենության) ● Web կայքի հասցե	ՀՀ Արարատի մարզի Այգեզարդի Ա.Ղարիբյանի անվան միջնակարգ դպրոց (093)59-22-43 aygezard@schools.am

Բովանդակություն

Ներածություն	3-4
Հիմնական բովանդակություն	5-22
Եզրակացություններ, առաջարկություններ	23
Օգտագործված գրականության ցանկ	25
Հավելվածներ	26

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Կարևոր են արդյոք ուսուցչի հմտությունները տարբեր ունակություններ ունեցող աշակերտների հետ աշխատանքում միջին դպրոցում Այգեզարդի Ա. Ղարիբյանի անվան միջնակարգ դպրոցի օրինակով Հետազոտական հարց–Կարևոր են արդյոք ուսուցչի հմտությունները տարբեր ունակություններ ունեցող աշակերտների հետ աշխատանքում միջին դպրոցում Այգեզարդի միջնակարգ դպրոցի օրինակով
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարող ունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Սովորել սովորելու Լեզվական գրագիտություն
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	7-րդ դասարանի 24 աշակերտներ,որից 15 –ը տղա ,9-ը՝աղջիկ

Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանակական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցիմիջոցով եւ այլն)	Որակական հետազոտություն, դիտարկման մեթոդ

Ներածություն

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: Պարտադիր է կատարել հղում աղբյուրին	1. https://www.arlis.am/documentview.aspx?docid= 114876ՀՀ 2. Ուսուցիչների հնգօրյա վերապատրաստումների ծրագիր և այլ նյութեր: 3.Սարուխանյան Ս.,Դալլաքյան Ա., Դիշաղաջյան Ն., Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ:
Հետազոտության ընթացքը	Ուսուցիչն իր գործունեության ընթացքում դասավանդում է տարբեր դասարաններում, առընչվում են զարգացվածության տարբեր աստիճաններ ու մակարդակներ ունեցող աշակերտների հետ, մշտապես փորձում են գտնել նրանց ուսումնական գործունեությունը խթանող և մոտիվացնող մեթոդներ ու հնարներ: Ստացվում է, որ նույն առաջադրանքն ուսուցիչը չի կարող հանձնարարել ամբողջ դասարանին և նրանցից նույն արդյունքը ակնկալել, պահանջել: Հետազոտական աշխատանքի նպատակն է պարզել և ցույց տալ ուսուցչի հմտության կարևորությունը տարբեր ունակություններ ունեցող աշակերտների հետ աշխատանքում:



Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	01.09-20.09.2

Յուրաքանչյուր աշակերտին տրված առաջադրանքը պետք է համապատասխանի իր հնարավորություններին: Ինչպես ասել է Ալբերտ Էյնշտեյնը. <<Բոլորը կարող են հանճարեղ լինել, միայն եթե հաշվի առնենք յուրաքանչյուրի կարողությունները, այլ ոչ թե ձկան մասին դատենք ծառ բարձրանալու կարողությամբ՝ նրան մատնելով ողջ կյանքում ամենավերջին անհաջողակը լինելու սեփական գիտակցմանը>>:

Որպեսզի աշակերտներից յուրաքանչյուրը սովորեն իրենց ունակություններին համապատասխան, սովորողը ստանա իր գործողությունների ընտրության ինքնուրույնություն, ստեղծագործելու, ինքնագնահատման հնարավորություն , ուսուցիչը կիրառում է տարբերակված ուսուցում: Տարբերակված ուսուցման առաջին խնդիրը մոտիվացիայի բարձրացումն է, որը ստիպում է սովորողին աշխատել և կատարելագործվել:

	Մոտիվացիան է, որ սովորողին ստիպում է կենտրոնանալ,հետաքրքրվել մատուցվող նոր նյութով,առաջընթաց գրանցել:Մոտիվացիան է ,որ սովորողին ստիպում է կենտրոնանալ , հետաքրքրվել մատուցվող նոր նյութով ,առաջընթաց գրանցել: Այն օգնում է աշակերտներից յուրաքանչյուրին սովորել իր ունակություններին համապատասխան ,սովորողին տալ իր գործողությունների ընտրության ինքնուրույնության

	,ստեղծագործելու ,ինքնագնահատման հնարավորություն: Սարբերակված ուսուցումը սովորողին կօգնի մասնագիտություն ընտրելու հարցում նաև:Սովորողը ,իր ցանկություններն ու հնարավորությունները հաշվի առնելով, ինչպես նաև , ինքնագնահատելով , ի վերջո կհասկանա ,թե հետագայում ինչ ուղղությամբ կարող է ձեռքբերումներունենալ:Բացարձակ անկարող աշակերտ չկա ,յուրաքանչյուր աշակերտի մեջ էլ կան ուժեղ կողմեր,հետաքրքրության սահմաններ , և մանկավարժի հմտությունը կայանում է նրանում ,որ ուսուցումը կազմակերպի ,հիմնվելով այդ ուժեղ կողմերի ու հետաքրքրությունների վրա: Տարբերակված ուսուցման նպատակն է ուշադրության կենտրոնում պահել ոչ միայն այն աշակերտներին ,ովքեր դժվարանում են լիարժեք յուրացնել կրթական ծրագրերը , այլ նաև այն աշակերտներին , ովքեր ունեն մեծ ընդունակությոնևներ , հետաքրքրություններ և բարձր առաջադիմություն , առարկան ավելի խորը ուսումնասիրելու համար: Վերջին շրջանում հանրակրթական դպրոցների ուսուցիչների հետաքրքրությունը մեծացել է աշակերտների տարբերակված ուսուցման խնդրի նկատմամբ: Պարզաբանենք ,ինչ է տարբերակված ուսուցումը և ինչ է ուսուցման անհատական մոտեցումը:Այն դեպքում , երբ դասարանում սովորում են տարբեր կարողություններով ,նախասիրություններով , հետաքրքրություններով , տարբեր մտավոր և ֆիզիկական զարգացում ունեցող աշակերտներ,ապա անհրաժեշտ է կիրառել տարբերակված մոտեցում,արդյունավետ ուսուցում ապահովելու համար: Տարբերակված ուսուցման հիմնական նպատակն այն է, որ ընդհանուր կրթության բովանդակության յուրացման գործընթացում ամեն մի աշակերտի համար ապահովվի միջոց՝ նրա հետաքրքրությունների, հակումների, ընդունակությունների,

	ճանաչողական պահանջմունքների բավարարման և զարգացման նպատակով: Հետազոտությունների արդյունքում եկել են այն եզրակացության, որ աշակերտների պահանջները լիարժեք բավարարելու ամենափորձված և արդյունավետ եղանակներից մեկը տարբերակված ուսուցումն է, որը

	հնարավորություն է տալիս բոլոր աշակերտներին ներգրավելու դասապրոցեսի մեջ: Չնայած որ դասարանները կազմավորվում են ըստ աշակերտների տարիքային խմբերի, սակայն սովորողների նույն տարիքի լինելը դեռևս չի նշանակում, որ նրանք ունեն զարգացման և ընդունակությունների նույն մակարդակը: Նրանք ցուցաբերում են գիտելիքների յուրացման տարբեր աստիճաններ, և ուսուցիչն այս դեպքում ուսուցման գործընթացը պետք է իրականացնի՝ հենվելով միջին կարողություններ ունեցող աշակերտների վրա, սակայն այս երևութն էլ, իմ կարծիքով, ունի իր բացասական կողմերը: Փորձը ցույց է տվել, որ միջին մակարդակի վրա հիմնված ռազմավարությունը արհեստականորեն կասեցնում է ուժեղ աշակերտների զարգացումը, և նրանք ուսման նկատմամբ հետաքրքրությունը կորցնում են, իսկ թույլ աշակերտները այդպես էլ մնում են, նրանց մոտ առաջընթաց չի գրանցվում: Պետք է նշել, որ միջին կարողություններ ունեցող աշակերտները ևս իրարից տարբերվում են, նրանք ունեն տարբեր հակումներ և հետաքրքրություններ, հոգեկան գործընթացի զարգացան տարբեր մակարդակներ: Հետազոտության արդյունքում պարզվել է, որ ուսումնական գործունեության ընթացքում՝ դասի ժամանակ, ուսուցիչը դժվարանում է որևէ առաջընթաց գրանցել, քանի որ սովորողների միջև առկա են մեծ տարբերություններ, որոնք պայմանավորված են մի շարք հանգամանքներով: Նախ սովորողների նախնական գիտելիքները տարբեր են, ինչը պայմանավորված է նրանով, թե ինչպիսի 7 ընտանիքից է այդ երեխան, ինչպիսին են նրա բառապաշարը, մտավոր կարողությունները, արժեքային համակարգը, ճանաչողական կարողությունների տարբերությունները՝ ընկալումը, կենտրոնացված ուշադրության տևողությունը, լեզուն, մտածողությունը և հիշողությունը: Տարբերակված ուսուցման դեպքում ուսուցիչն իր առջև պետք է խնդիր դնի

	ուսումնասիրել սովորողների անհատական առանձնահատկությունները, ավելի դյուրին դարձնի նրանց ուսուցման գործընթացը: Ամենակարևոր գործոնը երեխաների մոտ սովորելու նկատմամբ հետաքրքրություն ու գիտելիքների բացերը լրացնելու ցանկություն

	առաջացնելն է: Դա անելու համար մենք պետք է առաջին հերթին նշենք աշակերտների անգամ ամենափոքր հաջողությունները և ձեռքբերումները, բացատրենք նրանց հետ մնալու պատճառները ու փորձենք միասին գտնել դժվարությունները հաղթահարելու ուղիներ: Սովորողներն անընդհատ պետք է զգան իրենց առաջընթացը, նույնիսկ աննշան հաջողությունը ոգեշնչում է երեխային, մղում է ավելի լավ աշխատելու, մեծացնում է հետաքրքրությունը գիտելիքի նկատմամբ: Տարբերակված ուսուցման հիմքում ընկած է անհատական մոտեցման սկզբունքը: Այն ուսուցման և դաստիարակության ճկուն գործընթաց է և բնութագրվում է աշակերտների անհատական ընդունակությունների վերլուծությամբ: Այս գործընթացն իրականացնելիս ուսուցիչը ոչ թե աշակերտին պետք է հարմարեցնի ուսումնական նյութին, այլ ուսումնական նյութը հարմարեցնի աշակերտին՝ այն մշակելով, դարձնելով մատչելի յուրաքանչյուր երեխայի համար: Այս մոտեցումը կնպաստի դասին բոլոր աշակերտների ակտիվացմանը, և յուրաքանչյուր աշակերտ կունենա իր անելիքը: Այն դեպքում, երբ ուսուցիչն ամբողջ դասարանին հանձնարարում է նույն առաջադրանքը՝ հաշվի չառնելով աշակերտների անհատական, հոգեբանական կարիքները, ապա նա չի կարող ապահովել որակյալ կրթություն և օգնել աշակերտին առաջ շարժվել իր կարողություններին, ընդունակություններին համապատասխան: Նշված կարևոր գործոնի անտեսման 8 արդյունքում աշակերտները տուժում են, որովհետև չեն կարողանում հաղթահարել իրենց առջև ծառացած դժվարությունները, ուստի նվազում է հետաքրքրությունը ուսման հանդեպ, և աստիճանաբար ընկնում է նրանց ինքնագնահատականը: Որպեսզի աշակերտը դառնա ավելի ինքնավստահ, անհրաժեշտ է, որ զբաղվի իր ընդունակություններին, կարողություններին և հմտություններին համապատասխան հանձնարարությամբ, ստանա իր կարողություններին համարժեք

	ծավալի և բարդության աշխատանք: Եվ այս ամենը ուսուցիչը պետք է անի այնքան վարպետորեն և նրբանկատությամբ, որ շերտավորումը չդառնա աշակերտին պիտակավորելու միջոց:

ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆ ԵՎ ՄԻՋՈՑ

Տարբերակված ուսուցումը՝ որպես նորարարություն, մեր օրերում դասապրոցեսի ընթացքում ուսուցիչները լայնորեն կիրառում են, այն հնարավորություն է տալիս բարելավել յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքները իր ունակությունների, շահերի ու հնարավորությունների սահմաններում: Տարբերակված ուսուցում կարելի է կիրառել այն դեպքում, երբ աշակերտներն առանձնանում են ըստ ունակությունների և այն դեպքում, երբ նրանք չեն կարողանում լիովին յուրացնել ուսումնական ծրագրերը: ԱՄՆ-ի ու Արևմտյան Եվրոպայի սահմանադրության համաձայն՝ նույն դասարանում կարող են սովորել տարբեր հաշմանդամություն, հուզական, ինչպես նաև վարքագծային խանգարումներ ունեցող երեխաներ, որոնց հետ աշխատում են հոգեբաններ, սոցիալական մանկավարժներ, ուսուցիչներ, որոնք փորձում են ազդել ոչ միայն երեխաների վրա, այլև, աշխատանք տանելով նրանց ծնողների հետ, ստեղծում են հատուկ պայմաններ նրանց զարգացման ու ինտեգրման համար:

Առանձնացնենք «տարբերակում» և «անհատականություն» հայեցակարգերը: Առաջին հայացքից թվում է, թե դրանք նույնն են, սակայն դա այդպես չէ: Տարբերակելիս հաշվի են առնվում սովորողների գերիշխող հատկությունները, իսկ անհատականության ժամանակ հաշվի են առնվում տվյալ սովորողի անձնային առանձնահատկությունները: Այսպիսով՝ ի հայտ է գալիս տարբերակված ուսուցումը, որն հանդիսանում է որպես ուսումնառության պայման և միջոց: Ուսումնառություն կազմակերպման ընթացքում ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր աշակերտի զարգացման առանձնահատկությունները, հնարավորությունները, հետաքրքրություններն ու ուսումնական նյութի բարդության աստիճանը: Որքան էլ ուսուցիչը լինի հմուտ, ինչպիսի բազմազան մեթոդներ և հնարներ էլ

	կիրառի, նա չի կարող բոլոր աշակերտների մոտ հավասարապես նույն արդյունքը գրանցել, և ահա այդ պատճառով էլ առաջանում է տարբերակված ուսուցման անհրաժեշտությունը: Ուսուցիչը այն կարող է իրականացնել դասի ցանկացած

	ժամանակահատվածում, նույնիսկ նոր նյութը հաղորդելուց հետո: Տարբերակված ուսուցում իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել գործողությունների հետևյալ հաջորդականությունը՝ 1. Ուսուցանվող նյութի ուսումնասիրում 2. Տարբեր գործիքների և ռազմավարությունների կիրառում 3. Տարբեր մակարդակի թեստերի կազմում, գրավոր ներկայացում 4. Հին և նոր գիտելիքների միջև կապի ստեղծում և ամրապնդում 5. Արդյունքների քննարկում և վերլուծում Ուսումնառության կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել ուսումնառության ոճերը: Ընթերցողականին պետք է տրամադրել դասագրքեր, տեսողականին՝ նյութը բացատրող տեսադասեր, լսողականին՝ աուդիո դասագրքեր, 11 կինեստետիկին՝ առցանց ինտերակտիվ հանձնարարություն: Մաթեմատիկական և արվեստի ուղղվածություն ունեցող աշակերտներին կարելի է նյութը մատուցել տարբեր տառատեսակներով և տարբեր գույների թվերով: Ըստ սովորողի առանձնահատկության, օրինակ, կարելի է ստեղծել հանգիստ, անաղմուկ միջավայր՝ առաջարկելով աշխատանքը կատարել գրադարանում: Այսպիսով՝ նույն նյութն հաղորդելիս պետք է կիրառել տարբեր գործիքներ: Անշուշտ, սա դյուրին չէ այն առումով թեկուզ, որ դասը պլանավորելիս կպահանջվի երկար ժամանակ: Տարբերակված ուսուցումը ուսուցչին հնարավորություն է տալիս ճիշտ կազմակերպել դասապրոցեսը՝ հաշվի առնելով դրա բոլոր էլեմենտները: Տարբերակված ուսուցում կազմակերպելիս շեշտը պետք է դնել տարբեր մակարդակներով գիտելիքների յուրացման վրա՝ ցածր մակարդակից անցնելով բարձրին: Տարբերակված ուսուցում չի նշանակում սովորողների մի մասին տալ ուսումնական նյութի մեծ ծավալ, մյուս մասին՝ քիչ, պարզապես յուրաքանչյուր սովորող պետք է յուրացնի ուսումնական նյութի

	նվազագույն ծավալը, իսկ այն սովորողը, ով ունի մեծ պոտենցիալ, չպետք է կորչի ՝ մնալով նվազագույն շեմում: Տարբերակված ուսուցման նպատակն է ընդհանուր կրթության բովանդակության յուրացման գործընթացում յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել պայմաններ՝ նրա ընդունակությունների, հետաքրքրությունների, հակումների, ճանաչողական

	պահանջմունքների բավարարման ու մաքսիմալ զարգացման համար: Տարբերակումը բնորոշվում է սովորողների այնպիսի խմբերի ստեղծումով, որտեղ գործունեության նպատակը, բովանդակությունը, մեթոդները, ձևերն ու արդյունքները տարբերվում են: Տարբերակված ուսուցումն իրականացվում է 3 հիմնական փուլերով. 1. ճանաչել յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները, 2. խմբավորել սովորողներին ըստ իրենց անհատական առանձնահատկությունների 3. տարբերակել յուրաքանչյուր խմբի ուսումնական գործընթացը: Ուսուցման անհատականացումն ու տարբերակումը նպաստում է անհատի մտավոր, բարոյական, հուզական և ֆիզիկական զարգացմանը, հնարավորություն է ընձեռում լիովին բացահայտել երեխայի ստեղծագործական հնարավորությունները, հոգեբանական առանձնահատկությունները, մտավոր կարողությունները, ապահովել անհրաժեշտ պայմաններ երեխայի անձի ձևավորման և զարգացման համար հաշվի առնելով նրա տարիքային առանձնահատկությունները, անհատականությունը: Տարբերակված մոտեցումը, բնականաբար, փոխում է նաև ուսուցչի գործառույթները: Ուսուցչի գլխավոր խնդիրն է դառնում սովորողի անձի զարգացման համար 13 համապատասխան պայմանների՝ ուսումնական միջավայրի ստեղծումը, որը ենթադրում է. ա/ հաղորդակցության ժողովրդավարական, հարգալից ոճ բ/ բոլորի ակտիվ մասնակցություն՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի տարիքային, անհատական առանձնահատկությունները, գիտելիքներն ու փորձառությունը գ/ աջակցող, խրախուսող, բարյացակամ մթնոլորտ՝ յուրաքանչյուրի համար հաջողության հասնելու հնարավորություններով դ/ գիտելիքներ ու կարողություններ ձեռք բերելու դրդապատճառների ապահովում: Ուսուցման արդյունավետությունը մեծապես կախված է այն բանից, թե ով է սովորողը և ինչպես է իրեն

	պահում ուսումնական գործընթացում: Պայմանավորված է նրանով, թե ինչպիսի ընտանիքից է այդ երեխան, ինչպիսին են նրա բառապաշարը, մտավոր կարողությունները, արժեքային համակարգը, ճանաչողական կարողությունների տարբերությունները՝ ընկալումը, կենտրոնացված ուշադրության

	տևողությունը, լեզուն, մտածողությունը և հիշողությունը: Տարբերակված ուսուցման դեպքում ուսուցիչն իր առջև պետք է խնդիր դնի ուսումնասիրել սովորողների անհատական առանձնահատկությունները, ավելի դյուրին դարձնի նրանց ուսուցման գործընթացը: Ամենակարևոր գործոնը երեխաների մոտ սովորելու նկատմամբ հետաքրքրություն ու գիտելիքների բացերը լրացնելու ցանկություն առաջացնելն է: Դա անելու համար մենք պետք է առաջին հերթին նշենք աշակերտների անգամ ամենափոքր հաջողությունները և ձեռքբերումները, բացատրենք նրանց հետ մնալու պատճառները ու փորձենք միասին գտնել դժվարությունները հաղթահարելու ուղիներ: Սովորողներն անընդհատ պետք է զգան 14 իրենց առաջընթացը, նույնիսկ աննշան հաջողությունը ոգեշնչում է երեխային, մղում է ավելի լավ աշխատելու, մեծացնում է հետաքրքրությունը գիտելիքի նկատմամբ: Տարբերակված ուսուցման հիմքում ընկած է անհատական մոտեցման սկզբունքը: Այն ուսուցման և դաստիարակության ճկուն գործընթաց է և բնութագրվում է աշակերտների անհատական ընդունակությունների վերլուծությամբ: ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ Անհատականացված ուսուցման կարևոր արժանիքն համարվում է այն, որ թույլ է տալիս ամբողջովին ադապտացնել բովանդակությունը, մեթոդները և երեխայի ուսումնական գործունեության տեմպը, հետևել նրա ամեն մի գործողությանը և կոնկրետ խնդիրների լուծման օպերացիաներին, ինչպես նաև հետևել չիմացությունից իմացության անցմանը, ուսումնական գործունեության մեջ ժամանակին կատարել անհրաժեշտ ուղղումներ: Այս ամենը սովորողին թույլ է տալիս խնայողաբար աշխատել, անընդհատ վերահսկել սեփական էներգիայի վատնումը, աշխատել օպտիմալ, որը, իսկապես, թույլ է տալիս հասնել ուսումնական բարձր արդյունքների: Անհատական ուսուցումը համընդհանուր դպրոցում կիրառվում է շատ

	սահմանափակ: Անհատական մոտեցումը ● Մանկավարժության սկզբունք է, որի համաձայն ուսումնադաստիարակչական աշխատանքում ուսուցիչը աշխատում է ոչ միայն աշակերտական խմբի, այլ առանձին աշակերտների հետ անհատական մոդելով՝

	հաշվի առնելով նրանց անհատական առանձնահատկությունները ● Երեխայի հետ շփման գործընթացում շեշտը դրվում է նրա անհատական առանձնահատկությունների վրա ● Ուսումնական գործընթացում իրականացվում է երեխայի անահատական առանձնահատկությունների հաշվառում ● Մանկավարժահոգեբանական պայմաններ են ստեղծվում ոչ միայն բոլոր սովորողների զարգացման, այլ նաև յուրաքանչյուր երեխայի զարգացման համար: Իմ կատարած դասի միջոցով Այգեզարդի միջնակարգ դպրոցում տարբերակված ուսուցումն իրականացնում եմ երեք հիմնական փուլերով՝ առաջին հերթին փորձում եմ վեր հանել յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկությունները, ապա խմբավորում եմ աշակերտներին ըստ իրենց անհատական առանձնահատկությունների և տարբերակում յուրաքանչյուր խմբի ուսումնական գործընթացը: Նպատակահարմար է, որ յուրաքանչյուր ուսուցիչ ինքն ընտրի աշակերտների խմբերի ընտրության մոտեցումը: Իմ կարծիքով, սխալ մոտեցում է երեխաներին «թույլերի» ու «ուժեղների բաժանելը»: Տարբերակված ուսուցումը փորձնական նպատակով կիրառեցի 10-րդ դասարանում՝ աշակերտներին բաժանելով երեք պայմանական խմբերի / խմբերը մշտական չեն, և դրանց կազմը կարող ենք հաճախակի փոխել/: Առաջին խմբում ընդգրկեցի մշտական լրացուցիչ օգնություն պահանջող աշակերտներին, երկրորդ խմբում՝ այն աշակերտներին, ովքեր կարողանում են ինքնուրույն հաղթահարել նյութը, իսկ երրորդ խմբում ընդգրկեցի նրանց, ովքեր կարողանում են կարճ ժամանակում հաղթահարել առաջադրանքն ու օգնություն ցուցաբերել ուրիշներին: Այնուհետև իրականացրի ներդասարանային տարբերակում՝ ըստ տարբեր բարդության աստիճանի առաջադրանքների կատարման:

	Առաջին խմբին հանձնարարեցի կարդալ ուսումնական նյութը, պատմել՝ առանձնացնելով գլխավոր միտքը: Երկրորդ խմբին հանձնարարեցի կարդալ ուսումնական նյութը, կազմել պլան և հարցադրումներ: Իսկ երրորդ խմբին՝ կարդալ ուսումնական նյութը, տալ նյութի համառոտ բնութագրությունը, արտահայտել սեփական դիրքորոշումը:

Ամփոփման արդյունքում առանձնացրի գիտելիքի ընկալման երեք մակարդակներ՝

1. Նվազագույն մակարդակ - մտապահում է, հասկացել է, վերարտադրում է:
2. Միջին մակարդակ - յուրացրել է նյութը և կիրառում է միջին իրավիճակում:
3. Բարձր մակարդակ – նյութը յուրացրել է լիարժեք, կիրառում է ոչ ստանդարտ վիճակում, աշխատանքին մոտենում է ստեղծագործաբար: Ծերտավորված ուսուցում կարելի է իրականացնել նաև խմբային աշխատանքի միջոցով: Խմբերը կարող ենք կազմել նույն կամ տարբեր գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ ունեցող աշակերտներից, այս դեպքում շատ կարևոր է, թե ուսուցիչն ինչ նպատակ է դրել իր առջև: Խումբը քննարկում ու լուծում է 18 տրված առաջադրանքները, որոնցից յուրաքանչյուրը ստուգվում է ուսուցչի կողմից և ակտիվ քննարկվում խմբերում:

ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Տնային աշխատանքը աշակերտի ծավալած ուսումնական գործունեությունն է, որը կատարվում է նրա կողմից ինքնուրույն: Աշակերտներին կարող են տրվել բազմազան և բազմաբնույթ տնային հանձնարարություններ, որոնց գլխավոր առանձնահատկությունը սովորողի ինքնուրույնության ձևավորումն է, որը մեծապես նպաստում է նրա՝ ուսումնաճանաչողական գործունեություն ծավալելու կարողության զարգացմանը: Այն առաջին հերթին ինքնակրթության ճանապարհ է: Տնային առաջադրանքները հանձնարարելիս ճիշտ կլինի նախ և առաջ հաշվի առնել աշակերտների գիտելիքները, ընդունակությունները, հետաքրքրությունների շրջանակը: Առանձին աշակերտների համար պետք է մասնակիորեն անհատականացնել նախ նպատակը, ապա ծավալը և կատարման հնարները՝ պահպանելով տնային առաջադրանքի հիմնական բովանդակությունը: Շատ հաճախ ուսուցիչը մեծ ծավալի տնային առաջադրանք է

	հանձնարարում ամբողջ դասարանին, հաշվի չառնելով աշակերտների տարբեր ընդունակությունները, զարգացման միևնույն աստիճան չունենալու հանգամանքը, որը հանգեցնում է մի շարք խնդիրների: Օրինակ՝ թույլ կամ միջին կարողությունների տեր երեխան ստիպված է լինում դիմել ծնողի կամ ինչ-որ մեկի օգնությանը՝ այդ մեծ ծավալի և դժվարություն ներկայացրող տնային

	առաջադրանքը կատարելու համար, կամ դիմում է դասընկերոջ օգնությանը, և արդյունքում մի քանի աշակերտ ներկայացնում են նույն աշխատանքը, որը բոլորովին իր նպատակին չի ծառայում: Այսպիսով՝ տնային առաջադրանքը երեխայի համար դառնում է հոգս, քանի որ նա չի կարողանում ինքնուրույն կատարել այն: Տնային աշխատանքները կարող են տրվել անհատական և տարբերակված ձևերով: Անհատական տնային աշխատանքը տրվում է դասարանի առանձին աշակերտներին՝ որոշակի նպատակով քարտերի վրա կամ աշխատանքային տետրում: Այս դեպքում ուսուցիչը ստուգում է տվյալ աշակերտի յուրացրած գիտելիքների մակարդակը, վերացնում է այն բացթողումները, որն ունի սովորողը առանձին թեմաների ուսումնասիրման արդյունքում: Անհատական տնային 20 աշխատանքները կարող են տրվել բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներին՝ ստեղծագործական կարողությունները և հակումները զարգացնելու նպատակով: Իսկ ահա տարբերակված տնային աշխատանքի մոտեցման հիմքում աշակերտների ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն է, որն իրականացվում է տարբերակված առաջադրանքների միջոցով: Ուսուցիչը գրեթե միշտ տնային աշխատանքները առաջադրում է միջին աշակերտի մակարդակով, քանի որ, եթե հանձնարարվի առաջադրանք թույլ աշակերտի մակարդակով, ապա ուժեղն այն կկատարի շատ արագ: Իսկ եթե հանձնարարվի ուժեղ աշակերտի մակարդակով, ապա թույլ աշակերտը դա կկատարի համեմատաբար դանդաղ, ինչն էլ, բնականաբար, վատ կանդրադառնա նրա ինքնազգացողության վրա. արդյունքում նա կկորցնի վստահությունն իր ուժերի նկատմամբ: Միևնույն առաջադրանքը թույլերի համար կարող է լինել բարդ, իսկ ուժեղների համար՝ հեշտ, և ի վերջո տնային հանձնարարությունները չեն ծառայի իրենց նպատակին և արդյունք չեն տա: Տվյալ խնդրի լուծման հիմնական ուղին

	տարբերակված մոտեցման ցուցաբերումն է տնային աշխատանքն առաջադրելիս: Այսպիսով՝ ուսուցիչը պետք է տնային հանձնարարություն տալուց առաջ հաշվի առնի յուրաքանչյուր աշակերտի կարողություններն ու հմտությունները, առաջադրանք տա ամեն մեկին իր առանձնահատկություններին

	համապատասխան: Օրինակ՝ ցածր պատրաստվածություն ունեցող աշակերտներին պետք է տալ այնպիսի առաջադրանքներ, որտեղ ավելի շատ են կիրառվում տարբեր տեսակի դիդակտիկ պարագաներ: Դրանով մենք կհասնենք նրան, որ առաջադրանքները կլինեն ավելի կոնկրետ, ավելի հեշտ ընկալելի ու մատչելի: Ուսուցիչը, ելնելով սովորողի ուսումնառության ոճից և նախապատվություններից, կարող է սովորողին հանձնարարել կատարել այնպիսի առաջադրանքներ, որոնցում կամփոփվեն թեմայի, դասի հիմնական հայեցակարգային պահանջները՝ թեստ, նախագիծ, հաշվետվություն: Առաջադրանքի տիպերը՝ ըստ ուսումնառության ոճերի կարող են լինել՝ ● Ընթերցողական - գրքի վերլուծություն, էսսե ● Տեսողական - թեմատիկ քարտեզ, սահիկաշար ● Լսողական - բանավոր հաշվետվություն ● Կինեստետիկ - մոդելավորում, լաբորատոր փորձեր Ուսուցման մեթոդներ ասելով, հասկանում ենք գործընթաց ուսուցչի և աշակերտի միջև, ինչի արդունքում տեղի է ունենում գիտելիքի ,հմտությունների ,և կարողությունների փոխանցում և յուրացում ՝ նախատեսված ուսումնառության բովանդակությամբ: Գոյություն ունեն կրթական-ճանաչողական գործունեության արդյունավետությանը միտված վերահսկման մեթոդներ , գիտելիքի , հմտոըթյունների կարողությունների տիրապետման արդյունավետությունը որոշող բանավոր ,գրավոր ստուգումներ և ինքնաստուգումներ; Ուսուցման պրակտիկայում գոյություն ունեն և այլ մոտեցումներ՝ դասակարգելու ուսուցման մեթոդները ,որոնք հմնված են մատուցվող նյութն ընդունելու գիտակցականության աստիճանի վրա: Դասը միևնույն տարիքային խմբի կրթության կազմակերպման ձև է կոնկրետ օրակարգով և

	բոլորի համար միասնական կրթական ծրագրով; Դասի արդյունավետության հետ կապված կարևոր նախապայման է դասի ամենօրյա պլանավորումը :Դասի արդյունավետության կարևոր հիմք է ճիշտ մեթոդների ընտրությունը ;Մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ,

դրանք պետք է ուղղված լինեն սովորողների մտավոր ու զգայական կարողությունների , ինքնուրույնության , սոցիալականացման և այլ հմտությունների զարգացման :Մեթոդի ընտրության վրա կարող են ազդել բազմաթիվ գործոններ:
Դրանք են՝
1.Ուսուցման նպատակները և խնդիրները 2.Նյութի բովանդակությունը 3.Ուսումնական նյութի ծավալը և բարդությունը 4.Նոր գիտելիք ձեռք բերելու նկատմամբ աշակերտների շահագրգռվածությունը և համագործակցային հմտությունների մակրդակը 5.Աշակերտների տարիքային առանձնահատկությունները, 6.Ուսումնական ժամաքանակը 7.Ուսուցման նյութատեխնիկական պայմաներ, 8.Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունները, 9.Աշակերտների թվաքանակը դասարանում 10.Ուսուցչի պատրաստվածության մակարդակը և այլն :
Ուսուցման մեթոդն առաջին հերթին պայմանավորված է ուսուցման գործընթացի բարդությամբ ;Վերջինս իր մեջ ներառում է երեք կարևոր խնդիր `
-Ինչ սովորեցնել ,
-ինչի համար սովորեցնել ,
-ինչպես սովորեցնել ;
Այս խնդիրների իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է ուսուցման ժամանակ
; Գոյություն ունեն ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդներ;Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու , ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար:Բայց կարևոր են նաև ավանդական մոտեցումների օգտագործումը և համագործակցային ուսուցման կազմակերպումը:Համագործակցային ուսուցումը փոխում է աշակերտի և ուսուցչի դերը դասարանում ;Դասավանդման և

	ուսուցման ղեկավարումը բաժանվում է աշակերտների խմբերի կողմից և նրանց միջև: Ուսուցչի ընտրությանն առաջարկվող մեթոդները համագործակցային խնդիրներն իրականացնելուն ;Ստորև ներկայացված են մեթոդների շտեմարանի մի մասը: 1.Կանխատեսման ուղեցույց

	2. Մտագրոհ 3. Ծրջագայություն պատկերասրահում 4.Փոխներգործուն նշանների համակարգ 5.Հնգյակ մեթոդ 6. Դերախաղ 7. ԳՈՒՍ /Գիտեմ-Ուզում եմ սովորել-Սովորել եմ / 8.Երկխոսություն 9.Մտածիր –զույգ կազմիր- հաղորդիր 10.Կարճ դասախոսություն 11.Պրիզմա 12.Т-աձև աղյուսակ 13.Վենի –դիագրամ 14.Խթանում-Իմաստի ընկալում- 15.Կշռադատում/ԽԻԿ համակարգ; Ներկայացնենք ուսուցման գործընթացի կազմակերպման մի շարք տեսակներ: 1.Ինքնուրույն աշխատանք Այս աշխատանքի արդյունքում աշակերտները ձեռք բերում ինքնույն աշխատելու կաչողություններ;Այն կարելի է հանձնարարել անհատին,զույգին կամ խմբին:Տրվող առաջադրանքները չեն տարբերվում միմյանցից , բոլորը միևնույն առաջադրանք են կատարում ; 2.Զույգերով աշխատանք Զույգերով աշխատանքի ընթացքում նույն ընդունակություններով երկու աշակերտ կատարում են միմյանց հետ համագործակցելով :Միասին սովորող աշակերտներից մեկն իր ընդությունևներով զիջում է մյուսին;Ավելի բարձր ընդունակություններով աշակերտը կատարում է «ուսուցչի» դերը : 3.Անհատական աշխատանք Յուրաքանչյուր աշակերտ ունի տարբեր ընդունակություններ և սովորելու անհատական ոճ;Այս փաստը պետք է հաշվի առնել բարձր կամ թույլ ընդունակություններով աշակերտների հետ աշխատելիս:Աշակերտի անհատական ընդունակությունները զարգացնելը համար

	կազմված ծրագիրը կոչվում է ԱՈՒՊ: Անհատական աշխատանքը կարելի է կիրառել շերտավոր ուսուցման ժամանակ; 4.Ֆիլմեր և տեսանյութեր Ֆիմերն ու տեսանյութերը նույնպես նպատակահարմար են դասի ընթացքում կիրառելու համար:Վերջիններս զարգացնում են լսել-հասկանալու կարողությունները և հարստացնում են բառապաշարը ; 5.Սահիկաշարերի օգտագործումը

Շատ ուսուցիչներ օգտագործում են սահիկաշարեր դասապրոցեսի ժամանակ ;Այն նախապես պետք է կառուցված լինի դասի թեմային համահունչ : Այն պետք է հնարավորինս պարզ և մատչելի լինի ; Յուրաքանչյուր սահիկաշար պետք է ունենա սկիզբ, միջնամաս և ավարտ,տևի 5-7 րոպե ;
Օրինակ՝ կարելի է պատրաստել սահիկաշար՝«Գոյական» և այլն վերնագրերով :Ուսուցիչը ցույց է տալիս այ՝ մեկնաբանելով :
6.Գծապատկերների ,աղյուսակների կիրառում:
Աղյուսակների շնորհիվ շատ սովորողներ կարողանում են հեշտությամբ ըմբռնել նյութը՝ առանց մանրակրկիտ բացատրության:Գծագիրներն օգտագործվում են որպես վիզուալ ուսուցմզն ձևեր ,որոնք փոխկապակցված են մի շարք թվերի և միավորների հետ:Առավել տարածված են Վենի Դիագրամը:Վենի Դիագրամն արդյունավետ միջոց է նկարագրելու , համեմատելու և խմբավորելու տարբեր երևույթներ՝ ըստ իրենց բնորոշ գծերի:Կարելի է նկարագրել տարբեր առարկաներ , մարդկանց, պատմական իրադարձություններ ,գաղափարներ կամ ֆիզիկական հատկանիշներ:
7. Խաչբառերի լուծում
Այն ոշհամարվում է ակտիվ ուսուցման ձև և աշակերտներին ներգրավում է դասապրոցեսի մեջ՝զարգացնելով նրանց ակտիվ բառապաշարը:Օրինակ՝ռուսաց լեզվի դասաժամին հոմանիշներ, հատկանիշներ սովորելիս ուսուցիչը կազմում է խաչբառ՝ տրված ներ բառացանկով:
8. Ցուցահանդես դասարանում
Շրջագայությունը դասարանում և ցուցահանդեսի դիտումը հարստացնում է աշակերտների մտահորիզոնը ,նպաստում է թեմայի լավ յուրացմանը :Սա գործնական աշխատանքի համար լավ և արդյունավետ միջոց է:Արդյունքում ստացվում է թեմային համապատասխան պաստառ կամ բացիկ:Սովորողները կարող են խմբավորվել ըստ թեմաների ,որպեսզի իրենք նյութերը հայթայթեն տվյալ թեմաների շուրջ համացանցից կամ այլ

	աղբյուրից:Երբ աշխատանքը պատրաստ է , յուրաքանչյուր թեմա ներկայացնելու համար ընտվում են աշակերտներ:Օրինակ՝ 8-րդ դասարանում կազմակերպվում է ցուցահանդես ,որի ժամանակ աշակերտներից մեկը պետք է

ներկայացնի իր պաստառը՝որևէ խոսքի մասի վերաբերյալ:Յուրաքանչյուր աշակերտի տրվում է 2-3 րոպե ներկայացնելու համար: Ցուցահանդեսը լինում է դասարանում, պաստառները փակցվում են դասարանի պատերին:

Ռուսաց լեզվի ուսուցումն առավել քան երբևէ պահանջում է սովորողների մոտ ձևավորել և զարգացնել հաղորդակցական կարողություններ:Սա նշանակում է ,որ սովորողի մոտ ձևավորվել և զարգացնել հաղորդակցական կարողություններ:Սա նշանակում է , որ սովորողի համար անհրաժեշտ է ստեղծել միջավայր , որը կխթանի նրա մտածողությանը,կառաջացնի հաղորդակցվելու անհրաժեշտություն:Այս համատեքստում դիտազննական պարագաները ուղղակի անփոխարինելի են :

Դրանց ընդգրկումը ռուսաց լեզվի ուսուցման ընթացքում օգնում է ուսուցչին դասաժամը ծառայեցնել իր բուն նպատակին: Դիտազննական պարագաներից ամենատարածվածները նկարներն ու քարտերն են:

Դասերի ընթացքում պետք է մեծ ուշադրություն դարձնել նաև հետևյալ մեթոդներին՝ 1.Կրկնության մեթոդ Սովորողը կրկնության միջոցով սովորում է հաճախ օգտագործվող բառերն ու արտահայտությունները և դրանք անմիջապես օգտագործում պրակտիկայում:Այստեղ բանավոր խոսքն իշխում է գրավոր խոսքի վրա: Կարդալու և պատմելու մեթոդ Դասավանդողը հարուստ բառապաշարով փոքրիկ պատմություններ է պատմում սովորողներին , հետո էլ հարցեր տալիս պատմության վերաբերյալ:Վերջիններս պետք է պատասխանեն հարցերին՝օգտագործելով նյութի բառերը:

Մեթոդ ընտրելիս պետք է նախապես մտածել արդյոք համապատասխանում է դասանյութին և արդյունավետ է տվյալ թեման յուրացնելու համար,թե ՝ոչ:Ռուսաց լեզու առարկայի դասաժամերին կարելի է կիրառել այնպիսի

	մեթոդներ ,որոնք առավելագույն արդյունք յկարող են տալ տվյալ թեմայի շրջանակներում և ընդունվում են նաևա աշակերտների կողմից :Բոլոր մեթոդների կիրառումը պարտադիր չէ, քանի որ որոշ մեթոդներ նույիսկ անարդյունավետ են և համահունչ չեն ռուսաց

լեզվի առարկայի դասաժամերին:

Նաև հասկանալի է , որ նույն մեթոդի շատ կիրառումը կարող է ձանձրույթ է և անհետաքրքրություն առաջացնել աշակերտների մոտ:

Դասաժամերին մեծ տեղ են հատկացվում գծապատկերներին , դրանք շատ են նաև դասագրքերում , նաև կիրառելի են ուսուցիչների կողմից , դրանց հանձնարարման միջոցով աշակերտները ներկայացնում են թեմաները ամփոփ ձևով:

Օրինակ՝«Ածական» թեման ուսուցանելիս առաջարկում են աշակերտներին բնութագրել որևէ առարկա կամ երևույթ հատկանիշ ցույց տվող բառերով , դրանք գրում ենք գրատախտակին:

Խելացի սևահեր

տխուր

ծույլ գեղեցիկ

Զբաղ աշխատասեր կապուտաչյա

Կիրառում եմ նաև Т-աձև աղյուսակը «Ածական» թեման անցնելիս;

Օրինակ՝ տրված ածականները տեղադրել Т-աձև աղյուսակում ՝ըստ ածականի տեսակների՝լեռնային, մայրական, հզոր,կարճ, ոսկե, չքնաղ, սորբ, մաքուր լուսավոր

Т-աձև աղյուսակով կարելի է ներկայացնել բառը , դրա հոմանիշը և հականիշը

Բառ	հոմանիշ	հականիշ
դրախտ թաքուն ալարկոտ	եղեմ գաղտի ծույլ դժբախտ	դժոխք բացահայտ աշխատասեր բախտավոր

անբախ
տ

Որպես ակտիվացնող միջոցներ ռուսաց լեզու



	առարկայի դասաժամերին կիրառվում են նաև կրթական առցանց գործիքներ: Learning App , Quiz և այլ ՏՀՏ գործիքների տարբեր ձևաչաձերով ստեղծվում են առաջադրանքներ գրեթե բոլոր բաժինների համար , որոնք հետաքրքրություն են առաջացնում սովորողների մոտ և կիրառվում են ոչ միայն գիտելիքների ստացման , այլև հենց սովորեցնելու նպատակով :Օրինակ՝ http/learningapps org/display?v=pdvvrzxft22
Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	ՈՒսումնասիրելով հետազոտության արդյունքները ՝եկա այն եզրահանգմանը, որ անասելի մեծ է ուսուցչի կողմից ցուցաբերված հմտության դերը տարբեր ունակություններ ունեցող աշակերտների հետ աշխատանքում,իսկ այդ համատեքստում կարևոր է նաև

ճիշտ մեթոդների, հնարների ընտրությունը և կիրառումը դասապրոցեսում:Որպեսզի ուսուցում լինի արդյունավետ , ուսուցիչը պետք է նախ բացահայտի յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները: ՈՒսուցման անհատականացումն ու տարբերակումը նպաստում է անհատի մտավոր,

	բարոյական, հուզական, , ֆիզիկական զարգացմանը, հնարավորություն է ընձեռում լիովին բացահայտել աշակերտի ստեղծագործական հնարավորությունները,հոգեբանական կարողությունները, ապահովել անհրաժեշտ պայմաններ երեխայի անձի ձևավորման և զարգացման համար `հաշվի առնելով նրա առանձնահատկությունները:ՈՒսուցչի գլխավոր խնդիրն է դառնում անձի զարգացման համար համապատասխան պայմանների `ուսումնական միջավայրի ստեղծումը,`հաշվի առնելով աշակերտներից յուրաքանչյուրի անհատական առանձնահատկությունները:
Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ

Օրինակ՝

1. Ամիրջանյան Ցու. Ա., Սահակյան Ա. Ս., Մանկավարժություն, Մանկավարժ 2005:

2. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020:

3. Մանկավարժական միտք 117, Զանգակ, 2013:

4. Веденина Татьяна Ивановна, Дифференциация обучения как важный фактор развития познавательных интересов школников, МОУ

5. “Нижнеиртышская средняя общеобразовательная школа”, 2007:

6. Зарецкий В. К., Проблемы дифференцированнога обучения и возможности интегразии, ИПИ, Москва 2004:

7. Зинудин Абасович Абасов, Дифференциация обучения: сущность и формы, Журнал директор школи, 2004:

8. https://forum.armedu.am/forum/

9. https://coppershop.ru/hy/uhod-za-volosami/realizaciya-principov-individualnogo-i-%20differencirovannogo.html

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր

- Հետազոտության գործիքներ (Հարցաթերթիկներ կամ այլ)
- Նկարներ
- Արդյունքներ